# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագրի վերաբերյալ**

**Վարկային համաձայնագրի անվանումը՝** «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» ծրագրի վարկային համաձայնագիր (Վարկ թիվ 3150-ARM(SF)

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 05.09.2014թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 12.02.2015թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 24,022,000 ՓՀԻ (փոխառության հատուկ իրավունք (SDR), որը համաձայնագրի կնքման պահին կազմել է 37 մլն ԱՄՆ դոլար, փոփոխությունների արդյունքում համաձայնագրի փաստացի գումարը կազմել է 18,708,219.49 ՓՀԻ:
**Համաձայնագրով նախատեսված բաղադրիչ 1-ը՝** Կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնում ու արդիականացում և պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի կառուցում
**Համաձայնագրով նախատեսված բաղադրիչ 2-ը՝** 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցում
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 3,14 %
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.06.2022թ.
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝**
05.11.2019թ.-15.05.2039թ.

***1.1 Բաղադրիչ 1-ի անվանումը*՝**
«Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» վարկային ծրագրի շրջանակներում SCADA/EMS (Supervisory Control And Data Acquisition /Energy Management System; Կարգավարական կառավարման ու տվյալների հավաքագրման համակարգ/Էներգիայի կառավարման համակարգ) համակարգերի ընդլայնում ու արդիականացում և պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի կառուցում

**Համաձայնագրի բաղադրիչ 1-ով նախատեսված գումարը**՝ համաձայնագրի կնքման պահին նախատեսված գումարը կազմել է 8,829,708.0 ՓՀԻ (համարժեք է 13,600,000.00 ԱՄՆ դոլարին), համաձայն 28.10.2022թ. կնքված՝ ենթավարկային համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր՝ գումարը կազմել է 10,445,433.85 ՓՀԻ:

**Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝** «Կարգավարական կառավարման ու տվյալների հավաքագրման (SCADA)/Էներգիայի կառավարման (EMS) համակարգերի ընդլայնման ու արդիականացման և պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի կառուցման աշխատանքների ծրագիր

**Ծրագրի նպատակը՝** Համակարգում արդեն իսկ ներդրված SCADA համակարգը լիարժեք գործող ու արդյունավետ դառնալու համար անհրաժեշտ է եղել այն ընդլայնել և արդիականացնել: Մասնավորապես նախատեսված է եղել լրացուցիչ տեղադրել շուրջ 280 կմ օպտիկամանրաթելքային մալուխ, զգալիորեն ավելացնել SCADA համակարգից օգտվողների քանակը, արդիականացնել գոյություն ունեցող ծրագրային փաթեթը և ստեղծել հարևան երկրների SCADA համակարգերի հետ տվյալների միջսերվերային փոխանակման հնարավորություն, կառուցել էլեկտրաէներգետիկ համակարգի պահուստային կարգավարական կառավարման կենտրոն, որը կարևոր է հատկապես այն պարագայում, երբ առաջնային կարգավարական կենտրոնը (Երևանի կենտրոնում տեղակայված) բնական աղետների, պատերազմական իրավիճակների կամ տեխնիկական պատճառներով խափանվում է, և անհրաժեշտ է ապահովել էլեկտրաէներգետիկական համակարգի վերահսկողությունն ու շարունակական կառավարումը:

**Ակնկալվող արդյունքները՝** Բարձրացնել ստացվող տվյալների ճշգրտությունը, էներգահամակարգի կարգավարման հուսալիությունը, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ տեխնիկական, ֆինանսական և գործառնական կարողությունները, ինչը կնպաստի էներգահամակարգի հուսալի աշխատանքին, կորուստների նվազեցմանը, անխափան էլեկտրամատակարարմանը, վթարների հայտնաբերման ու սպառողների էներգամատակարարման ընդհատումների ժամկետների կրճատմանը:

**Ծրագրի խորհրդատուի անվանումը՝** Tractebel Engineering GmbH և CESI S.p.A համատեղ ձեռնարկություն և ենթախորհրդատու Ամերիա

**Խորհրդատուի պայմանագրի անվանումը՝** «Կարգավարական կառավարման ու տվյալների հավաքագրման (SCADA)/էներգիայի կառավարման (EMS) համակարգերի ընդլայնման և արդիականացման աշխատանքների վերահսկողություն և կառավարում» պայմանագիր

**Խորհրդատուի պայմանագրի գումարը՝** 1,300,366.0 ԱՄՆ դոլար
**Խորհրդատուի պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 06.05.2015թ.
**Խորհրդատուի պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 06.05.2015թ.
**Խորհրդատուի պայմանագրի սկիզբը և ավարտը՝** 06.05.2015թ. - 30.06.2022թ.

**Ծրագրի կապալառուի անվանումը՝** Ռեդինետ (Հայաստան) և Siemens (Ավստրիա) կոնսորցիում
**Կապալառուի պայմանագրի անվանումը՝** SCADA/EMS համակարգերի ընդլայնման ու արդիականացման և պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի կառուցման պայմանագիր
**Կապալառուի պայմանագրի գումարը՝** 9,955,976.0 եվրո և 217,198,090.0 ՀՀ դրամ

**Կապալառուի պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 23.10.2017թ.
**Կապալառուի պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 01.12.2017թ.
**Կապալառուի պայմանագրի սկիզբը և ավարտը՝** 23.10.2017թ.-30.04.2022թ.

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը (*Բաղադրիչ 1-ի*)՝** Ծրագրի շրջանակներում աշխատանքներն ավարտվել են սահմանված ժամկետում՝ 2022թ. հունիսին, և իրականացվել են նախատեսված բոլոր վճարումները:

Ծրագիրն իրականացվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ կողմից:

***1.2 Բաղադրիչ 2-ի անվանումը***՝
220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցում

**Համաձայնագրի բաղադրիչ 2-ով նախատեսված գումարը՝** 15,192,292.00 ՓՀԻ, փոփոխությունների արդյունքում համաձայնագրի բաղադրիչ 2-ի փաստացի գումարը կազմել է 8,262,785.64 ՓՀԻ:

**Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝** էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագիր շրջանակներում 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցում:

**Ծրագրի նպատակը՝** վերակառուցել 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանները: Նախորդ տարիների ընթացքում Համաշխարհային բանկի աջակցությամբ 220 կՎ «Շինուհայր» ենթակայանը մասնակիորեն վերակառուցվել է: Ենթակայանում փոխարինվել են առաջնային լարման 220 կՎ լարման սարքվածքները, սակայն երկրորդային շղթաները, ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքները հնացած են և չեն բավարարում հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի հաղորդման պահանջները: «Ագարակ-2» ենթակայանում, որն անմիջականորեն կապված է իրանական 230 կՎ լարման ցանցի հետ, նախատեսվում է տեղադրել լրացուցիչ 220/110 կՎ ավտոտրանսֆորմատոր, որն էներգահամակարգի տվյալ հատվածում կապ կստեղծի 220 և 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծերի միջև և հնարավորություն կտա 110 կՎ «Ագարակ-1» ենթակայանից սնվող սպառողներին ապահովել էլեկտրաէներգիայի պահուստային սնուցմամբ:

**Ակնկալվող արդյունքները՝** Ենթակայանների արդիականացումն ու վերակառուցումը կնպաստի էներգետիկ անվտանգության և սպառողների էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանը, էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝** 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման գլխավոր կապալառուն պայմանագրով սահմանված ժամկետներում չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները՝ ամբողջությամբ չի ավարտել պայմանագրով նախատեսված սարքերի և սարքավորումների մատակարարումները և վերակառուցման աշխատանքները: Ծրագիրն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) սահմանված կարգով լուծել է գլխավոր կապալառուի հետ կնքված պայմանագիրը, որից հետո Ասիական զարգացման բանկի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարկային և դրամաշնորհային ծրագրերի կառավարման խորհրդի համաձայնությամբ առաջարկվել է ենթակայանների վերակառուցումը շարունակելու և լիավարտ հիմունքներով ավարտին հասցնելու աշխատանքներն իրականացնել Ընկերության սեփական միջոցներով՝ կապալառուի ընտրությունն իրականացնելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված մրցութային կարգով: Սահմանված կարգով իրականացված մրցույթի արդյունքում ենթակայանների վերակառուցման կապալառու է ճանաչվել «Կասկադ էներգո» ՍՊ ընկերությունը, որի հետ կնքվել են 220/110/6 կՎ «Ագարակ-2» ենթակայանի վերակառուցման կապալային աշխատանքների և 220/110/35/10/6 «Շինուհայր» ենթակայանի վերակառուցման կապալային աշխատանքների պայմանագրերը՝ համապատասխանաբար 1,135,000.0 ԱՄՆ դոլար և 5,255,000.0 ԱՄՆ դոլար արժողությամբ: 220/110/6 կՎ «Ագարակ-2» ենթակայանի վերակառուցման կապալային աշխատանքների պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 365 օրը, իսկ 220/110/35/10/6 «Շինուհայր» ենթակայանի վերակառուցման կապալային աշխատանքների պայմանագրի ժամկետը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 550 օրը: «Շինուհայր» ենթակայանի վերակառուցման շրջանակներում 2023թ. ընթացքում ավարտվել են առաջին և երկրորդ փուլերի աշխատանքները, ընթանում են երրորդ փուլի ավարտման և տարածքի բարեկարգման աշխատանքները: 220/110/6 կՎ «Ագարակ-2» ենթակայանի վերակառուցման աշխատանքներն ավարտվել են: Ենթակայանը դրված է լարման տակ: Ներկայումս իրականացվում է փաստաթղթավորման գործընթաց:
220/110/35/10/6 «Շինուհայր» ենթակայանի վերակառուցման էլեկտրամոնտաժային աշխատանքներն ավարտվել են, և ենթակայանը դրվել է լարման տակ: 2023-2024թթ. ձմեռվա եղանակային պայմանների պատճառով դեռևս ընթանում են ենթակայանի տարածքի բարեկարգման՝ ասֆալտապատման, կանաչապատման, ինչպես նաև շենք շինությունների վերջնական հարդարման աշխատանքներ: Զուգահեռ ընթանում է նաև փաստաթղթավորման գործընթացը:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից: